



## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«24» Տեպրի 2022թ.

ՀՐԱՄԱՆ N 254-շհ

«ՖԼԱՅԱՐԻՍՏԱՆ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «2» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով, «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով «ՖլայԱրիստան» ավիաընկերության 2022 թվականի մայիսի 16-ի հայտը.

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «ՖլայԱրիստան» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Ալմաթի/ՍԱԱԱ/-Երևան/ՍԴԿԶ/-Ալմաթի/ՍԱԱԱ/ երթուղով՝ 2022 թվականի հունիսի 2-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 27-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Հայաստանի

Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Նկատի ունենալով, որ Ընկերությունը օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ամառային ժամանակահատվածում 2022 թվականի հունիսի 2-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 27-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ՝ Ալմաթի/ՍԱԱԱ/Երևան/ՍԴԿԶ/-Ալմաթի/ՍԱԱԱ/ երթուղով Հայաստանի Հանրապետություն տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ Ընկերությունը բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված չսպասարկված ուղղությունների և չվերթերի հաճախականությունների պահանջներին՝ «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով սահմանված արտոնության սկիզբ սահմանել 2022 թվականի հունիսի 2-ը՝ 36 ամսով:

3. Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) 2022 թվականի ձմեռային ժամանակահատվածի մասով արտոնության վերաբերյալ դրույթները սահմանել առանձին հրամանով՝ ավիաընկերության ներկայացրած հայտի հիման վրա:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

5. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

5/24/2022

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 086/2022  
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 086/2022  
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR  
SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF  
ARMENIA

Օդանավշահագործողը Aircraft Operator	«ՖլայԱրիստան» “FlyArystan”
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	A320, A320N, A321N
Հաճախականությունը Frequency	շաբաթական 2 չվերթ 2 flights per week
Երթուղին Air route	Ալմաթի/UAAA/-Երևան/UDYZ/-Ալմաթի/UAAA/ Almaty/UAAA/-Yerevan/UDYZ/-Almaty/UAAA/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	02/06/2022 մինչև 27/10/2022 02/06/2022 till 27/10/2022

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ԱՎԻԱՅԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ  
ՆԱԽԱԳԱՀԻ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԿԱՏԱՐՈՂ  
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ  
ACTING CHAIR OF THE  
CIVIL AVIATION COMMITTEE  
MIHRAN KHACHATRYAN

5/24/2022  
  
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ  
Подписано: KHACHATRYAN MIHRAN 3308540266

24.05.2022  
(տպալու ամսաթիվը)  
(date of issue)